



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Օ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/7593-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին Գրիգորյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-856-05.02.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 183 - Ա որոշումը:



ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-856-05.02.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերից հանել «որոնք ենթակա չեն հրապարակման» բառերը, ինչը փաստացի կհանգեցնի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև հանձնաժողով) կողմից ընդունվող բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթ կրող եզրակացությունների հրապարակման պարտավորության սահմանմանը:

Նախագծի հիմնավորումներում, ի թիվս այլնի, նշվում է, որ գործող կարգավորումների պարագայում սահմանափակվում է անձանց՝ տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, անկատար են դառնում օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովման և հանրային հաշվետվողականության սկզբունքները, խոչընդոտներ են ստեղծվում հանրային ծառայության պաշտոնների հավակնող անձանց նշանակման գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողության իրականացման, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ ժողովրդավարական և իրավական պետության, քաղաքացիական հասարակության կայացման համար: Որպես վերոնշյալի հիմնավորում՝ վկայակոչվում են նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի NN ՍԴՈ-1010 և ՍԴՈ-1374 որոշումները:

Վերոնշյալի կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 8-րդ հոդվածը Հայաստանի Հանրապետության համար սահմանում են պոզիտիվ պարտականություն՝ ապահովելու անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության հիմնարար իրավունքների պաշտպան և արդյունավետ իրացումը:

Անձնական կյանքի գաղտնիության վերաբերյալ 1998 թվականի N 1165 բանաձևի¹ շրջանակներում դիրքորոշում է արտահայտել ԵԽ խորհրդարանական վեհաժողովը՝ արձանագրելով հետևյալը. «11. Վեհաժողովը վերահաստատում է յուրաքանչյուր մարդու անձնական կյանքի և խոսքի ազատության իրավունքի կարևորությունը՝ որպես հիմնարար ժողովրդավարական հասարակության համար: Այս իրավունքները *n'չ* բացարձակ են և *n'չ* էլ հիերարխիկ փոխհարաբերակցության մեջ են գտնվում, քանի որ դրանք հավասար արժեք ունեն:

¹Անձնական կյանքի գաղտնիության վերաբերյալ 1998 թվականի N 1165 բանաձև, հասանելի է հետևյալ հղումով.
<https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=16641&lang%20=en>

12. Սակայն, Վեհաժողովը ընդգծում է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը ոչ միայն պետք է պաշտպանի անձին պետական մարմինների միջամրությունից, այլ նաև մասնավոր անձանց կամ հասարակությունների միջամրությունից»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) Վոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի գործի² շրջանակներում արտահայտել է դիրքորոշում առ այն, որ պետությունը ոչ միայն պարտավոր է չմիջամերել անհատի անձնական կյանքին, այլև ունի պոզիտիվ պարտավորություններ՝ երաշխավորելու անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ արդյունավետ հարգանքը: ՄԻԵԴ նախադեպային դիրքորոշումների³ համաձայն 8-րդ հոդվածով ապահովված անձնական կյանքի գաղտնիության իրավունքը նույնքան կարևոր է, որքան 10-րդ հոդվածով ապահովված արտահայտվելու ազատությունը:

Վերոգրյալից հետևում է, որ անդամ պետությունները կրում են պոզիտիվ պարտականություն՝ ապահովելու իրենց քաղաքացիների պաշտպանությունն անձնական կյանքի գաղտնիության անհիմն սահմանափակումներից ու առնվազն նույնարժեք իրավաչափ նպատակով չհիմնավորված իրավակարգավորումներ չեն կարող սահմանել: Այս դիրքորոշումը ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի հիման վրա է ձևավորվել, քանի որ մշտապես ՄԻԵԴ-ը փորձել է ապահովել հավասարակշռությունն անձնական կյանքի գաղտնիության և ազատ արտահայտվելու, տվյալներ փնտրելու, գտնելու իրավունքների միջև՝ ողջամիտ սահմանափակումներ սահմանելով հանրային գործունեությամբ զբաղվող անձանց համար: Դեռ ավելին՝ դատարանի կարծիքով անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը: Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված երաշխիքն առաջնային նպատակ ունի ապահովելու յուրաքանչյուր մարդու անհատականության զարգացումը՝ առանց արտաքին միջամտության, այլ մարդկանց հետ իր հարաբերություններում: Հետևաբար, գոյություն ունի այլ անձանց հետ փոխհարաբերությունների գոտի, որը նույնիսկ հասարակական բնույթ կրելու համատեքստում կարող է ընկնել «մասնավոր կյանքի» տիրույթ⁴:

Համաձայնելով այն դիրքորոշմանը, որ պետական մարմինների գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը դրական ազդեցություն են ունենում ժողովրդա-

² CASE OF VON HANNOVER v. GERMANY (nos. 40660/08 and 60641/08), հասանելի է հետևյալ հղումով.
<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22dmdocnumber%22%3A%22900154%22%2C%22itemid%22%3A%22001-109029%22%7D>)

³ CASE OF AXEL SPRINGER AG v. GERMANY (no. 39954/08) հասանելի է հետևյալ հղումով.
<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22dmdocnumber%22%3A%22900156%22%2C%22itemid%22%3A%22001-109034%22%7D>), CASE OF VON HANNOVER v. GERMANY (nos. 40660/08 and 60641/08), հասանելի է հետևյալ հղումով.
<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22dmdocnumber%22%3A%22900154%22%2C%22itemid%22%3A%22001-109029%22%7D>), Handbook on CASE LAW OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS CONCERNING THE PROTECTION OF PERSONAL DATA, էջեր 95, 105, 109, 172, 175, 182, 214 (<https://rm.coe.int/t-pd-2018-15-case-law-on-data-protection-may2018-en/16808b2d36>), Guide on Article 8 of the European Convention on Human Rights, էջեր 6-18, 41
https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_8_ENG.pdf

⁴ St' u Von Hannover v. Germany (2004), կետ 50.

վարական ինստիտուտների կայացման գործընթացի վրա, այնուամենայնիվ, պետք է ընդգծենք, որ առկա են ողջամիտ սահմանափակումներ, այն է՝ օրենքով պաշտպանվող գաղտնիքներ, այդ թվում՝ պետական, առևտրային գաղտնիքները, մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը և այլն, որոնք պետք է պահպանվեն, քանի որ ժողովրդական հասարակարգի կենսական նշանակություն ունեցող տարրերից են նաև ազատ շուկայական հարաբերությունները՝ հիմնված մրցակցության սկզբունքի, հանրության ու դրա յուրաքանչյուր անդամի անվտանգության, անհատի անձնական շփումների, «մենակ մնալու իրավունքի» նկատմամբ հարգանքի վրա:

Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ, 34-րդ, 42-րդ, 51-րդ հոդվածներով, ՄԻԵԿ-ի 8-րդ և 10-րդ հոդվածներով, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածներով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգավորումները, ՀՀ սահմանադրական դատարանի NN ՍԴՌ-997, ՍԴՌ-1010, ՍԴՌ-1234, ՍԴՌ-1374, ՍԴՌ-1546 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, ՄԻԵԿ 8-րդ և 10-րդ հոդվածների վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային որոշումներում ՄԻԵԴ արտահայտած դիրքորոշումները⁵ փաստում են, որ անձի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության, ինչպես նաև անձին վերաբերող տեղեկատվության պաշտպանության և ազատ արտահայտվելու, այդ թվում՝ տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքները բացարձակ չեն և ենթակա են իրավաչափ սահմանափակումների:

Սահմանադրական վերոնշյալ հիմնարար իրավունքների ողջամիտ, իրավաչափ և համաչափ հարաբերակցությունն օրենսդիրն ամրագրել է օրենքով սահմանված կարգավորումներում: Այսպես, համաձայն օրենքի 3-րդ հոդվածի՝ հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է, ի թիվս այլնի, թափանցիկության սկզբունքի հիման վրա: Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հանձնաժողովն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է իր ընդունած

⁵ CASE OF AXEL SPRINGER AG v. GERMANY (no. [39954/08](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22dmdocnumber%22:%5B%222900156%22%2C%222001-109034%22%22%7D)) հասանելի է հետևյալ հղումով. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22dmdocnumber%22:%5B%222900156%22%2C%222001-109034%22%22%7D>), CASE OF VON HANNOVER v. GERMANY (nos. [40660/08](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22dmdocnumber%22:%5B%222900154%22%2C%222001-109029%22%22%7D) and [60641/08](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22dmdocnumber%22:%5B%222900154%22%2C%222001-109029%22%22%7D)), հասանելի է հետևյալ հղումով. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22dmdocnumber%22:%5B%222900154%22%2C%222001-109029%22%22%7D>), Protection of reputation, ECHR case law factsheet (https://www.echr.coe.int/Documents/FS_Reputation_ENG.pdf), Ojala and Etukeno Oy v. Finland and Ruusunen v. Finland (https://www.echr.coe.int/Documents/FS_Reputation_ENG.pdf), Leempoel & S.A. ED. Ciné Revue v. Belgium (no. 64772/01, հասանելի է հետևյալ հղումով. <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22:%5B%222001-77921%22%22%7D>)) Handbook on CASE LAW OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS CONCERNING THE PROTECTION OF PERSONAL DATA էջեր. 95, 105, 109, 172, 175, 182, 214 (<https://rm.coe.int/t-pd-2018-15-case-law-on-data-protection-may2018-en/16808b2d36>) Guide on Article 10 of the European Convention on Human Rights, էջեր՝ 31, 33, 36, 43-44, 79, 83 (https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_10_ENG.pdf), Guide on Article 8 of the European Convention on Human Rights, էջեր 6-18, 41, հասանելի է հետևյալ հղումով. https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_8_ENG.pdf, CASE OF EGILL EINARSSON v. ICELAND (no. [24703/15](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%222001-178362%22%22%7D)) հասանելի է հետևյալ հղումով. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%222001-178362%22%22%7D>) ALKAYA v. TURKEY (no. 42811/06) հասանելի է հետևյալ հղումով. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%222001-114030%22%22%7D>), <https://rm.coe.int/t-pd-2018-15-case-law-on-data-protection-may2018-en/16808b2d36>)

որոշումները և եզրակացությունները, ինչպես նաև իր ներկայացրած առաջարկությունները և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունները:

Մինևույն ժամանակ, հաշվի առնելով հիմնարար իրավունքների ողջամիտ, իրավաչափ և համաչափ հարաբերակցության ապահովման անհրաժեշտությունը, օրենսդիրը հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովման պահանջին զուգահեռ օրենքի 21-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանել է պարտավորություն, համաձայն որի հրապարակման ենթակա չեն հանձնաժողովի այն որոշումները և եզրակացությունները, որոնք պարունակում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք: Բացի դրանից, համաձայն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի՝ հանձնաժողովի կողմից տրամադրված՝ բարելավրության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունները ենթակա չեն հրապարակման:

Օրենքի 26.1-ին հոդվածի և հանձնաժողովի՝ 2020 թվականի մայիսի 22-ի Ն-02 որոշման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հանձնաժողովի կողմից բարելավրության ուսումնասիրությունը ներառում է անձի վերաբերյալ անձնական տվյալների, մասնավոր և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն, և դրանց արժանահավատության պարզում օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկությունների՝ տվյալ անձի և նրա հետ փոխկապակցված անձանց բանկային գաղտնիքի, ապահովագրական գաղտնիքի, առևտրային գաղտնիքի, անձնական տվյալներին առնչվող գաղտնի տեղեկությունների, որոշ դեպքերում նաև պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ստացման, վերլուծության և համադրության գործընթացի հիման վրա, իսկ բարելավրության վերաբերյալ եզրակացությունը ներառում է բարելավրության վերաբերյալ եզրակացության արդյունքները՝ համապատասխան հիմնավորումներով, որը ևս պարունակում է օրենքով սահմանված կարգով պահպանման ենթակա տեղեկություններ: Ուստի, բարելավրության վերաբերյալ եզրակացության հրապարակումը կարող է հանգեցնել անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի, անձնական տվյալների պաշտպանության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության հիմնարար իրավունքների խախտմանը, բացասական եզրակացության դեպքում՝ անգամ տվյալ անձի պատվի և բարի համբավի վնասմանը: Մինդեռ, ինչպես արդեն վերը վկայակոչվեց, Հայաստանի Հանրապետությունն ունի պոզիտիվ պարտականություն՝ ապահովելու նշված իրավունքների արդյունավետ իրացումը:

Միաժամանակ հարկ է նշել, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:*

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներից ևս բխում է, որ պետությունը բոլոր դեպքերում պարտավոր է ապահովել անձնական տվյալների պաշտպանությունը, անձնական տվյալները մշակել օրինական նպատակով՝ ապահովելով դրան

հասնելու միջոցների պիտանի, անհրաժեշտ և չափավոր լինելը, և անձնական տվյալներն առանց դրանց սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

Բացի դրանից, նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *առանց անձնական տվյալների սուբյեկտի համաձայնության մշակողը կարող է անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց կամ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրել, եթե դա նախատեսված է օրենքով և ունի բավարար պաշտպանության մակարդակ:*

Այսինքն, օրենքով սահմանված դեպքերում, անձնական տվյալների՝ երրորդ անձանց տրամադրվելու դեպքում անգամ պետք է ապահովվի անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակ, ինչից հետևում է, որ անգամ օրենքով սահմանված դեպքում երրորդ անձանց անձնական տվյալների տրամադրումը չպետք է հանգեցնի այդ տվյալների հրապարակմանը:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն *մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:* Իսկ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն կարծիքի արտահայտման ազատությունը՝ ներառյալ առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից, տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տեղեկատվությունը ենթակա չէ տրամադրման, եթե՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն*

ՀՀ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը, իր բազմաթիվ որոշումներում⁶ անդրադառնալով հիմնական իրավունքների սահմանափակման համաչափությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են. 1) սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, այն է՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված լինելը. 2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝ ա) պիտանիությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար. բ) անհրաժեշտությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար. գ) համարժեքությունը սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների համաձայն համարժեքության գնահատման նպատակով կարևոր է այն հարցի պարզումը, թե արդյո՞ք հնարավոր էր հասնել նույն նպատակին՝ անձանց իրավունքների նկատմամբ նվազ միջամտությամբ⁷:

Սույն դեպքում օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված կարգավորումների արդյունքում անձանց՝ տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության իրավունքի սահմանափակման հնարավոր նվազ միջամտություն է իրականացվել: Այսպես, օրենքի կարգավորումների համաձայն հանձնաժողովի եզրակացությունները հրապարակվում են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պարունակում են օրենքով սահմանված կարգով պահպանման ենթակա տեղեկություններ: Մինչև նույն ժամանակ, օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ավարտից հետո երկու ամսվա ընթացքում հանձնաժողովը՝ նախորդ տարվա բարելավության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումը տեղադրում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում անձինք իրավունք ունեն դիմելու հանձնաժողովին վերջինիս գործառույթներին առնչվող տեղեկություններ ստանալու նպատակով: Բացի դրանից, պետական պաշտոնատար անձանց, Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, ՀՀ սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների ընտրության և նշանակման իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերում ևս սահմանված են ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու նշված պաշտոններում անձանց նշանակման

⁶ Տես ՍԴՈ-278, ՍԴՈ-997, ՍԴՈ-1010, ՍԴՈ-1234, ՍԴՈ 1488, ՍԴՈ 1522, ՍԴՈ-1546 որոշումները:

⁷ Տե՛ս ՍԴՈ -1522 որոշումը, Vaskrsić v. Slovenia գործը, April 25, 2017, app. no. 31371/12, § 83.

գործընթացի թափանցիկությունը, հանրային վերահսկողությունը, անձանց՝ տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության իրավունքի արդյունավետ իրացումը:

Այսպես, օրինակ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 107-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված հավակնորդների համալրված ցուցակը, յուրաքանչյուր հավակնորդի կրթության և մասնագիտական աշխատանքի փորձառության վերաբերյալ տեղեկությունները Դատական դեպարտամենտը հրապարակում է հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում: Բացի դրանից, Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի օգոստոսի 31-ի «Դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը հաստատելու մասին» N 57-Ն-11 որոշմամբ սահմանվել է դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորմանը դիտորդների մասնակցության հնարավորությունը և համապատասխան ընթացակարգը, համաձայն որի թեստավորմանը որպես դիտորդ կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի մեկ ներկայացուցիչ, *փաստաբանների պալատի ներկայացուցիչ երկու փաստաբան* և հավակնորդների որակավորման գրավոր քննությանը մասնակցելու համար հավատարմագրված *հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ներկայացնել համապատասխան դիտորդություններ և առաջարկություններ*: Բացի դրանից, նշված կարգի համաձայն Դատական դեպարտամենտն ապահովում է թեստավորման ամբողջ ընթացքի ուղիղ հեռարձակումը թեստավորման սենյակից դուրս գտնվող տարածքում, որտեղ թեստավորման ընթացքին կարող է հետևել ցանկացած անձ:

Նշված կարգավորումներին զուգընթաց՝ յուրաքանչյուր անձ տեղեկություններ ստանալու իր իրավունքը կարող է իրականացնել նաև «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված կարգով՝ դիմելով Բարձրագույն դատական խորհրդին, ինչպես նաև համապատասխան պաշտոնատար անձանց ընտրության և նշանակման գործընթացն իրականացնող իրավասու մարմնին:

Հատկանշական է նաև հավելել, որ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության ենթարկվող պետական պաշտոնատար անձանց, այդ թվում՝ դատավորների, ՀՀ սահմանադրական դատարանի դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուները համապատասխան պաշտոններն ստանձնելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում պաշտոնական պարտականություններն ստանձնելու՝ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրեր, որոնք հանձնաժողովին հանձնումից հետո անմիջապես օրենքով սահմանված կարգով հրապարակվում են: Նշված հայտարարագրերը, ի

թիվս այլնի, տեղեկություններ են պարունակում ոչ միայն այդ անձանց, այլև նրանց ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և շահերի, աշխատանքային գործունեության վերաբերյալ: Բացի դրանից, պաշտոնն ստանձնելուց հետո հրապարակվում է այդ պաշտոնատար անձանց ինքնակենսագրությունը, որը տեղեկություններ է պարունակում նրանց կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի (նախկին և ներկա) անվանումը (անվանումները), զբաղեցրած պաշտոնը (պաշտոնները), ինչպես նաև նրանց ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ:

Ստացվում է՝ պաշտոնն ստանձնելուց հետո հրապարակային են դառնում բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության ենթարկված պետական պաշտոնատար անձանց բարեվարքության հարցաթերթիկի, ուսումնասիրության և բարեվարքության եզրակացության հիմնական բաղադրատարրերը՝ այդ անձանց և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրանց ընտանիքի անդամների գույքային դրության՝ գույքի և եկամուտի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը, այդ անձանց կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի (նախկին և ներկա) անվանումը (անվանումները), զբաղեցրած պաշտոնը (պաշտոնները), անձանց ընտանիքի անդամների պաշտոնները (աշխատանքային գործունեության վերաբերյալ):

Վերոնշյալ իրավանորմների վերլուծությունից և համադրությունից պարզ է դառնում, որ օրենսդրությամբ սահմանված կարգավորումներն ապահովում են անձանց և քաղաքացիական հասարակության տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության իրավունքի արդյունավետ իրացումը, հնարավորություններ են ստեղծում ինչպես հանձնաժողովի գործունեության, այնպես էլ պաշտոնատար անձանց, դատավորների ընտրության, այդպիսով նաև՝ գործադիր և դատական իշխանությունների ձևավորման գործընթացի նկատմամբ արդյունավետ հանրային վերահսկողություն իրականացնելու համար:

Այսպիսով, ՄԻԵԴ նախադեպային իրավունքով⁸ և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով սահմանված համաչափության թեստի կիրառման արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված կարգավորումը չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, նշված կարգավորումների արդյունքում անձանց տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության իրավունքի սահմանափակումը լեգիտիմ և համաչափ է, բխում է այդ իրավունքի սահմանափակման՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված հիմքերից, անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի, անձնական տվյալների պաշտպանության, պատվի ու

⁸ Guide on Article 8 of the European Convention on Human Rights, էջեր 6-18, 41, հասանելի է հետևյալ հղումով. https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_8_ENG.pdf, Guide on Article 10 of the European Convention on Human Rights, էջեր 18-24, հասանելի է հետևյալ հղումով. (https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_10_ENG.pdf), Vaskrsić v. Slovenia գործը, April 25, 2017, app. no. 31371/12, § 83.

բարի համբավի անձեռնմխելիության, ՀՀ Սահմանադրությամբ և ՄԻԵԿ-ով ամրագրված հիմնարար իրավունքների պաշտպանության և այդ իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու անհրաժեշտությունից:

Ինչ վերաբերում է նախագծում նշված այն հիմնավորմանը, որ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված կարգավորումները չեն ապահովում հանձնաժողովի գործունեության հաշվետվողականությունը, ապա հարկ է նշել, որ հանձնաժողովի գործունեության հաշվետվողականությանն առնչվող կարգավորումները սահմանված են օրենքի 6-րդ հոդվածով, համաձայն որի՝

- Հանձնաժողովը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո տասնօրյա ժամկետում հաշվետու ժամանակահատվածի գործունեության վերաբերյալ հաղորդումը տեղադրում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

- Հանձնաժողովն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է իր ընդունած որոշումները և եզրակացությունները, ինչպես նաև իր ներկայացրած առաջարկությունները և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունները:

- Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում հանձնաժողովն իր նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում է ներկայացնում ՀՀ Ազգային ժողով:

2. Նախագծի հիմնավորման մեջ վկայակոչված՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի ՍԴՌ-1374 որոշման վերաբերյալ հարկ է նշել, որ նշված որոշումը վերաբերում է Հայաստանի Հանրապետության նախկին դատական օրենսգրքով սահմանված դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստի՝ հանրային իրավական պատասխանատվության ստանձնման որակները բացահայտող արդյունքների հրապարակման անհրաժեշտության հարցին: Տվյալ դեպքում թեստը բացահայտում էր անձնային որակները՝ մասնագետ հոգեբանի կողմից կազմված որոշակի հարցադրումներին տվյալ թեկնածուի հավակնորդի պատասխանների արդյունքում: Մինչդեռ, սույն դեպքում հանձնաժողովի կողմից տրամադրվող բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը ենթադրում է անձի կողմից հանձնաժողովին տրամադրված անձնական տվյալների և օրենքով սահմանված այլ գաղտնիքների, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տվյալ անձի և երրորդ անձանց վերաբերյալ ստացված տեղեկությունների, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտված տեղեկատվության վերլուծության արդյունք: Այսինքն, սույն դեպքում հանձնաժողովի կողմից կայացվող բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթ կրող եզրակացությունը մի փաստաթուղթ է, որը պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող, այդ թվում՝ օրենքով ուղղակիորեն սահմանված դեպքերում՝ նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտված տեղեկություններ: Նշվածից ակնհայտ է, որ ՍԴՌ-1374 որոշման մեջ քննարկված հոգեբանական թեստը և օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը

հանդիսանում են բովանդակությամբ և նշանակությամբ միմյանցից էականորեն տարբերվող փաստաթղթեր:

Հարկ է նաև նշել, որ ՄԴՌ-1374 որոշումը վերաբերում է Հայաստանի Հանրապետության նախկին դատական օրենսգրքով սահմանված դատավորի թեկնածուների հավակնորդների ընտրության իրավահարաբերություններին, մինչդեռ 2018 թվականին ընդունվել է նոր օրենսգիրք՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, որը սահմանում է դատական իշխանության ձևավորման գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետ իրականացման մեխանիզմներ:

Հատկանշական է նաև փաստել, որ նույն՝ ՄԴՌ-1374 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը ևս կարևորում է դատավորների թեկնածության հավակնորդների՝ մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի պաշտպանության և այդ իրավունքների արդյունավետ իրացման ապահովման անհրաժեշտությունը, իսկ դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստի՝ հավակնորդների հանրային իրավական պատասխանատվության ստանձնման որակները բացահայտող արդյունքների հրապարակման անհրաժեշտությունը հիմնավորել է այն հանգամանքով, որ դրանք չեն պարունակում մասնավոր կյանքի տարր:

Ինչ վերաբերում է նախագծի հիմնավորման մեջ վկայակոչված ՄԴՌ-1010 որոշմանը, ապա այն վերաբերում է կոնկրետ դեպքում գերատեսչական ցանկերի՝ պետական և ծառայողական գաղտնիք չհանդիսանալու հարցին և, ըստ էության, բովանդակային առումով վերաբերելի չէ խնդրո առարկա իրավիճակին:

3. Բարեվարքության վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դատավորների և այլ պետական պաշտոնների թեկնածուների և թեկնածուների հավակնորդների տվյալների մշակման, բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության ընթացքում և դրա արդյունքներն ամփոփող համապատասխան փաստաթղթերում անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքներն ապահովվում և համապատասխան տեղեկությունների գաղտնիությունը պահպանվում են Մոլդովայում⁹, Բուլղարիայում¹⁰, Ռուրահնայում¹¹, Ալբանիայում¹², Լատվիայում¹³ և այլ եվրոպական պետություններում:

⁹ Տե՛ս հետևյալ հղումով. [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2014\)041-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2014)041-e)

¹⁰ Տե՛ս հետևյալ հղումով. [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2017\)034-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2017)034-e)

¹¹ Տե՛ս հետևյալ հղումով. https://vkksu.gov.ua/userfiles/doc/Law_on_Judiciary_and_Status_of_Judges_16%2007%202016_ENG.pdf

¹² Տե՛ս հետևյալ հղումով. <https://euralius.eu/index.php/en/library/albanian-legislation/send/90-institutions-combating-corruption-and-organized-crime/239-law-on-the-organization-and-functioning-of-institutions-for-combating-corruption-and-organized-crime-en>

Եվրոպայի խորհուրդը, «Ուկրաինայի բարեվարքության հանրային խորհրդի ընթացակարգային կանոնների վերաբերյալ» փորձագիտական զեկույցում¹⁴, անդրադառնալով Ուկրաինայում արդեն իսկ գործող դատավորների բարեվարքության վերաբերյալ եզրակացության հրապարակման հարցին, նշել է, որ բարեվարքության ստուգման գործընթացը պետք է լինի գաղտնի, իսկ արդյունքները՝ ոչ հրապարակային, քանի որ հրապարակումը կարող է հանգեցնել դատավորի հեղինակության վարկաբեկմանը և հասարակության շրջանում դատավորի կերպարի հեղինակագրվմանը, դատավորին կարող է դարձնել խոցելի, առիթ ստեղծել դատավորի նկատմամբ ճնշումների և ազդեցության գործադրման համար, կարող է հանգեցնել դատավորի անկախության սահմանափակմանը, դատավորի նկատմամբ ֆիզիկական բռնության կիրառմանը կամ արժանապատվության նսեմացմանը, իսկ վերջնարդյունքում՝ հանգեցնել դատական իշխանության հեղինակագրվմանը և դատական իշխանության նկատմամբ վստահության կորստին:

Ուկրաինայում գործող դատավորների բարեվարքության արդյունքների հրապարակման հարցի առնչությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև Վենետիկի հանձնաժողովը՝ դարձյալ կարևորելով գաղտնիության ապահովումը՝ ելնելով դատավորի անկախության երաշխավորման, դատավորի հեղինակությանը չվնասելու անհրաժեշտությունից¹⁵:

«Դատական իշխանության և դատավորների կարգավիճակի մասին» Ուկրաինայի օրենքի վերաբերյալ» զեկույցում¹⁶ ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը կարևորել է անձնական տվյալների և մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքների պաշտպանության և արդյունավետ իրացման անհրաժեշտությունը բարեվարքության ստուգման գործընթացում:

Հատկանշական է նաև, որ «Հանուն լավ կառավարման եվրոպական Միության և եվրոպայի խորհրդի գործընկերություն 2-րդ փուլի Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման ծրագրի շրջանակներում «Դատավորի թեկնածուի հավակնորդների բարեվարքության ստուգման վերաբերյալ» փորձագիտական զեկույցում հստակ նշվել է, որ հանձնաժողովի կողմից կայացվող բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթ կրող եզրակացությունը չհրապարակելու անհրաժեշտությունը բխում է դատավորի թեկնածուի հավակնորդի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության և վերջինիս հեղինակության հնարավոր

¹³ Տե՛ս հետևյալ հղումով. <https://www.vtek.lt/index.php/en>, <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.338141?ifwid=-n126u3sdm>

¹⁴ Տե՛ս հետևյալ հղումով. <https://rm.coe.int/council-of-europe-opinion-on-the-rules-of-procedure-of-the-public-coun/1680722415>

¹⁵ Տե՛ս հետևյալ հղումով. <https://rm.coe.int/council-of-europe-opinion-on-the-rules-of-procedure-of-the-public-coun/1680722415>

¹⁶ Տե՛ս հետևյալ հղումով. https://www.legislationline.org/download/id/7363/file/298_JUD_UKR_30June2017_en.pdf

վարկաբեկումը կանխելու կարևորությունից¹⁷: Համաձայն գեկույցի՝ Հայաստանի պարագայում թեկնածուի և նրա հետ փոխկապակցված երրորդ անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի ապահովման անհրաժեշտությունը նաև բխում է այն հանգամանքից, որ հանձնաժողովի կողմից իրականացվող բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունն իր բնույթով տարբերվում է բազմաթիվ պետությունների կողմից ընտրված մոդելից. Հայաստանի Հանրապետության կողմից առավել խորը և մանրամասն բարեվարքության ստուգման գործընթաց է իրականացվում, որը ներառում է անձանց մասնավոր կյանքին և անձնական տվյալներին առնչվող բազմաթիվ տեղեկությունների հավաքագրում և մշակում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով քննարկվող հոդվածը թողնել անփոփոխ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 183 - Ա

¹⁷ Փորձագետների դիրքորոշումը հիմնված է հետևյալ գեկույցների և դատական նախադեպերի հիման վրա. Report on Selection and Evaluation of Judges in Ukraine-EU Pravo Justice Project, հասանելի է հետևյալ հղումով. <https://www.pravojustice.eu/storage/app/uploads/public/5c0/fcd/a31/5c0fcd3162ea473697034.pdf>
Ozpınar v Turkey, App. No. 20999/04, 19 October 2010 հասանելի է հետևյալ հղումով. <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-101212>, CDL-AD(2016)036 Amicus Curiae Brief for the Constitutional Court of Albania on the Law on the Transitional Re-Evaluation of Judges and Prosecutors (the vetting law), para. 58, Craxi v Italy (No. 2), App.No. 25337/94, 17 July 2003, հասանելի է հետևյալ հղումով. <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61229>, Albayrak v Turkey, App. No. 38406/97, 31 January 2007, հասանելի է հետևյալ հղումով. <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-84829>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արմեն Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (Խ-856-05.02.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-856-05.02.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՈՐՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերից հանել «, որոնք ենթակա չեն հրապարակման» բառերը։

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ «Օրենք») Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ «Հանձնաժողով») գործառույթների շարքում թվել է նաեւ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաեւ օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման (Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ):

Հանձնաժողովի գործառույթների շրջանակներում՝ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ընդունված եզրակացության հրապարակման ենթակա չլինելու մասին նորմի սահմանումը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ «Սահմանադրություն») 42-րդ հոդվածի 1-ին մասին՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը սահմանափակելու տեսանկյունից, ինչպես նաեւ Օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված՝ Հանձնաժողովի գործունեության հաշվետվողականության եւ թափանցիկության, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցության սկզբունքներին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է իր ընդունած որոշումները եւ եզրակացությունները, ինչպես նաեւ իր ներկայացրած առաջարկությունները եւ դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունները:

Օրենսդիրը, ամրագրելով Հանձնաժողովի որոշումների, եզրակացությունների եւ առաջարկությունների հրապարակման ընդհանուր պահանջ, հետապնդել է Հանձնաժողովի գործունեության թափանցիկությունը որեւէ կերպ չսահմանափակելու միտում, եւ նման պայմաններում հասարակական կարեւոր նշանակություն ունեցող հանրային ծառայության պաշտոնների՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների եւ այլ դատարանների դատավորների բարեվարքության վերաբերյալ կազմված եզրակացությունների հրապարակման ենթակա չլինելու մասին օրենսդրական պահանջն արդարացված եւ հիմնավոր չէ, ինչպիսի եզրակացության հանգել է նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը (այսուհետ՝ «Սահմանադրական դատարան»):

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր՝ 2017թ. հունիսի 20-ի ՍԴՈ-1374 որոշմամբ, անդրադառնալով հանրային ծառայության որոշ պաշտոնների հավակնող անձանց վերաբերյալ տվյալների մատչելիության հարցին, վերադառնալով է իր՝ 2012թ. մարտի 6-ի ՍԴՈ-1010 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության եւ հանրության առջեւ պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը եւ նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը»: Միաժամանակ, «(...) առաջնորդվելով պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը, հանրային իշխանության գործողությունների թափանցիկությունը, հաշվետու գործունեությունը, հանրային-իրավական պատասխանատվությունն ապահովելու նկատառումներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների թեկնածությունների ցուցակի կազմմանը եւ հաստատմանը նախորդող գործընթացներում հավակնորդի կողմից ներկայացված, հավակնորդի վերաբերյալ կազմվող/ստացվող փաստաթղթերը, տեղեկությունները, դիտարկվող գործընթացների արդյունքները (դրանց վերաբերյալ տեղեկությունները), ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումների նպատակները հաշվի առնելով, պետք է լինեն բաց, թափանցիկ: Դրանք պետք է վերաբերեն ոչ թե թեկնածուների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանելիությունը գնահատող որակներին: Ուստի նման տվյալները պետք է ներառվեն հավակնորդի, հետագայում՝ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի անձնական գործում, ենթակա լինեն տրամադրման հավակնորդներին, երրորդ անձանց, այդ թվում՝ կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված հասարակական կազմակերպություններին: (...)

Ժողովրդավարական պետության սկզբունքի շրջանակներում հասարակությունն իրավունք ունի հանրային վերահսկողություն սահմանելու հանրային իշխանության, տվյալ պետական պաշտոնը զբաղեցնելու համար որակավորման ստուգման ընթացակարգի նկատմամբ, այն արդարության եւ հավասարության պայմաններում անցկացնելու նկատառումներով, իրազեկ լինելու տվյալ պետական պաշտոնի հավակնորդի մասնագիտական ունակություններին:»:

Սահմանադրական դատարանը գտել է, որ հանրային պաշտոնների, մասնավորապես՝ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված հավակնորդների հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման որակներին վերաբերող տվյալներն առնվազն այն հավակնորդների մասով, որոնք ընդգրկվել են դատավորների թեկնածությունների ցուցակում, հանրության համար ոչ մատչելի դարձնելը չի հետապնդում իրավաչափ նպատակ եւ հակասում է Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասին:

Փաստացի, ինչպես վերը մեջբերված օրենսդրական ակտի դրույթների, այնպես էլ Սահմանադրական դատարանի վերոշարադրյալ իրավական վերլուծության առկայության պարագայում, որով հիմնավորվում է հանրային պաշտոնների հավակնորդների հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանիության գնահատման վերաբերյալ տվյալների հանրային հասանելիության իրավաչափությունը եւ անհրաժեշտությունը, Օրենքով սահմանափակվել է Հանձնաժողովի՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ կազմված եզրակացության մատչելիությունը՝ սահմանելով, որ այն ենթակա չէ հրապարկման:

Ակնհայտ է, որ խնդրո առարկա գործի շրջանակներում անդրադարձ է կատարվել միայն Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, սակայն նույն ձեւակերպումն առկա է նաեւ 6-րդ կետում (Հանձնաժողովի գործառնությունների թվում են (...) պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարկման) եւ նույն խնդիրներն է հարուցում: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է կարգավորել նաեւ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ նաեւ առանց օբյեկտիվ հիմքի եւ իրավաչափ նպատակի խտրական վերաբերմունքի դրսևորումները բացառելու համար:

Գործող իրավակարգավորումների պարագայում սահմանափակվում է անձանց տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը, անկատար են դառնում Հանձնաժողովի գործունեության՝ Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքները, ինչը խոչընդոտ է հանդիսանում հանրային ծառայության պաշտոնների հավակնող անձանց նշանակման գործընթացների նկատմամբ հանրային վերահսկողության, Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված ժողովրդավարական եւ իրավական պետության, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության կայացման համար:

Հանձնաժողովի ամփոփ եզրակացության հրապարկման ոչ ենթակա լինելու մասին նորմերի առկայությունը վիճելի է նաեւ այն տեսանկյունից, որ Հանձնաժողովի՝ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված եզրակացությունը կազմելիս հաճախ հիմք են ընդունվում հանրամատչելի տվյալներ (օրինակ, գույքի եւ եկամուտների հայտարարագիր) կամ այնպիսի տվյալներ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցման միջոցով հեշտությամբ կարող են հասանելի դառնալ երրորդ անձանց (օրինակ, կադաստրային գործի տվյալներ):

Դատարանների եւ դատավորների անկախությունը երաշխավորող մարմնում, արդարադատություն իրականացնող մարմիններում եւ այլուր հանրային ծառայության պաշտոնների հավակնորդների վերաբերյալ տարբեր քաղաքական հոսանքների կողմից ձեւավորված անկախ եւ անկողմնակալ մարմնի կողմից տրված եզրակացությունը հանրությանը հասանելի դարձվելու արդյունքում՝ հասարակության յուրաքանչյուր անդամի եզրակացությունը գնահատելու, այն օրենսդիր իշխանության քվեարկության արդյունքներին, գործադիր իշխանության համապատասխան որոշումներին համադրելու հնարավորություն է տրվելու՝ ի ապահովումն Հանձնաժողովի՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցելու օրենսդրական պահանջի: